Անահիտ Մաշինյան, *դասախոս*
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հիմնաբառեր – աղքատության մակարդակ, զբաղվածության մակարդակ, էկոտուրիզմ, հոգևոր տուրիզմ, տրանսֆերտ, թաց լիզինգ, ֆինանսական ներուժ

Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի բարձրացումը, սոցիալական ու տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցումը և աղքատության մակարդակների տարածքային տարբերությունների նշանակալի կրճատումը հանդիսանում են մեր երկրի տարածքային զարգացման գերակայություն թե՛ միջնաժամկետ և թե՛ երկարաժամկետ հեռանկարում:

Տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա խորացումը խոչընդոտում է երկրի ինչպես ներքին սոցիալական ու տնտեսական կայունությանը այնպես էլ անվտանգությանը՝ նպաստելով տնտեսապես թույլ զարգացած տարածքներից բնակչության անցանկալի արտահոսքին:

Տնտեսական զարգացման այսպիսի միտումները պայմանավորել են սոցիալական այնպիսի կարևորագույն ցուցանիշների մարզային անհամաչափության աճ, ինչպիսիք են զբաղվածության ու աղքատության մակարդակները: 2004-2011 թթ. Զբաղվածության մակարդակի մարզային անհամաչափության միջակայքն աճել է 1.4, իսկ աղքատությանը՝ 1.7 անգամ[1]: Այս ցուցանիշների առումով ամենաբարենպաստ վիճակում է գտնվում հանրապետության մայրաքաղաքը: Այստեղ կենտրոնացած է երկրի տնտեսական ընդհանուր աճի գերակշիռ մասը, ինչն էլ պայմանավորում է ոչ գյուղատնտեսական զբաղվածության առավել բարձր ու աղքատության առավել ցածր ցուցանիշներ:

Համայնքային մակարդակում զարգացման անհամաչափությունները պայմանավորված են համայնքների օբյեկտիվ (բնակլիմայական ու աշխարհագրական) առանձնահատկություններով, և այնպիսի հիմնական գործոններով, ինչպիսիք են՝ համայնքի բնակ-

[1] Հավելված ՀՀկառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման «Հայաստանի հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»

չության թիվը և սոցիալ-ժողովրդագրական կազմը, սահմանամերձությունը, հեռավորությունը տնտեսական զարգացման մոտակա կենտրոնից, տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, դիրքը միջհամայնքային ու հանրապետական նշանակության ճանապարհների նկատմամբ, գյուղատնտեսական նշանակության հողերի քանակն ու որակը, դրանց ոռոգման առանձնահատկությունները, համայնքի ֆինանսական ներուժը, ներդրումային ակտիվությունը և այլն:

Չնայած պետության սոցիալական քաղաքականությունը միտված է բնակչության աղքատացման ռիսկի նվազեցմանն ու աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնմանը, սակայն 2008-2012 թվականներին ՀՀ բոլոր մարզերում տեղի է ունեցել աղքատության մակարդակի աճ, իսկ դրանց միջմարզային շեղումները կամ անհամաչափության բնութագրիչներն աճել են /աղյուսակ 1/:

Աղյուսակ 1

Աղքատության մակարդակի մարզային շարժը
Հայաստանում 2008-2012 թթ.

	2008 %	2012 %
Ընդամենը Հայաստան	27.6	32.4
Երևան	20.1	25.6
Արագածոտն	20.3	21.2
Արարատ	31.3	34.6
Արմավիր	24.5	34.3
Գեղարքունիք	32.0	35.5
Լոռի	34.2	38.7
Կոտայք	39.5	42.5
Շիրակ	42.4	46.0
Սյունիք	20.3	25.6
Վայոց ձոր	21.1	20.7
Տավուշ	23.2	27.5
Անհամաչափության բնութագրիչներ		
Մարզային (ներառյալ՝ Երևանը) միջինը	28.1	32.1
Ինդեքս, 2008թ. =100	*100.0*	*114.2*
Անհամաչափության միջակայք	22.3	25.3
Ինդեքս, 2008թ. =100	*100.0*	*113.5*
Միջին բացարձակ շեղում	7.1	7.2
Ինդեքս, 2008թ. =100	*100.0*	*101.4*

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», ՀՀ ԱՎԾ, 2013*թ.:*

Աղյուսակից երևում է, որ առավել բարենպաստ վիճակում են Վայոց Ձորի, Արագածոտնի մարզերը և Երևանը, որտեղ աղքատները կազմում են բնակչության 20-25 տոկոսը: Միայն Վայոց ձորի մարզում է աղքատության մակարդակը իջել/21%-ից՝ 20.7%/: Առավել աղքատ են աղետի գոտում գտնվող Շիրակի, Կոտայքի, Լոռու մարզերը /39-46 տոկոսը/: Հետևաբար, նպատակային տարածքային զարգացման քաղաքականության մշակումն ու ներդրումը անհրաժեշտ է նաև բնակչության կենսամակարդակի մարզային տարբերությունների հարթեցման առումով[2]: ՀՀ ԱՎԾ –ի 2013թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության /ՏՏԿԱՀ/ հիմնական արդյունքների հիման վրա հրատարակված զեկույցի համաձայն, որը անդրադարձել է 2008-2013թթ.-ին ՀՀ-ի սոցիալական վիճակին և կենսամակարդակի փոփոխությանը, 2013թ.-ին տնտեսությունը 2008թ.-ի համեմատ աճել է 2%-ով, մինչդեռ աղքատների թիվը ավելացել է 4.4%-ով: Աղքատության մակարդակը մայրաքաղաք Երևանում եղել է ամենացածրը 25.5%, Շիրակի մարզում՝ ամենաբարձրը՝ 46%: 2013թ-ին աղքատության մակարդակի ցուցանիշները 2008թ.-ի մակարդակը գերազանցել են ինչպես երկրի մասշտաբով, այնպես էլ բոլոր մարզերում և քաղաք Երևանում, բացի Վայոց ձորի մարզում[3]:

Բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը հանդիսանում է ՀԶԾ հիմնական նպատակը: Ծրագիրը նպատակադրում է ակտիվ տարածքային զարգացման քաղաքականության ներդրման միջոցով երկարաժամկետ հեռանկարում երկրում հասնել ինչպես տնտեսական զարգացման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի՝ աղքատության մակարդակների տարածքային տարբերությունների նշանակալի կրճատման ու հարթեցման: Ծրագրով նախատեսված է աղքատության առավել արագ ու նշանակալի կրճատում փոքր ու միջին քաղաքներում և գյուղերում, որը կհանգեցնի բնակչության կենսամակարդակի տարածքային տարբերությունների մեղմացման:

Արդյունաբերական արտադրանքի ծավալով 2013թ.-ին հանրապետությունում առաջատարը եղել է ք. **Երևանը**՝ թողարկվել է 506 մլրդ 816.1 մլն դրամի (ընթացիկ գներով), իրացվել՝ 493 մլրդ 589.5 մլն դրամի (ընթացիկ գներով) արտադրանք: Երկրորդ տեղում է **Սյունիքի մարզը**՝ համապատասխանաբար 204 մլրդ 911.3 մլն

---

[2] Հավելված ՀՀկառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշման «Հայաստանի հանրապետության 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»

[3] ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ-ի հիման վրա 2014թ.-ի նոյեմբերի 18-ի զեկույց

դրամ և 192 մլրդ 825.4 մլն դրամ ցուցանիշներով, Վերջին տեղերում են **Վայոց ձորի մարզը**՝ 12 մլրդ 2.8 մլն դրամ ու 12 մլրդ 400.9 մլն դրամ և **Տավուշի մարզը**՝ 10 մլրդ 298 մլն դրամ ու 10 մլրդ 56.4 մլն դրամ ցուցանիշներով/աղյուսակ2/[4]:

Աղյուսակ 2

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2013թ. հունվար-դեկտեմբեր

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. Դրամ	Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %
Ընդամենը ՀՀ	1240578.7	1214412.7	106.8
այդ թվում՝			
ք. Երևան	506816,1	493589,5	106,1
Արագածոտն	25112,7	21217,6	117,1
Արարատ	123593,8	137513	114,3
Արմավիր	50225,6	50891,2	104,8
Գեղարքունիք	23665,5	14737,8	105,6
Լոռի	75260,7	74580,5	102,9
Կոտայք	166063,7	164966,6	104,7
Շիրակ	42628,5	41633,8	96,6
Սյունիք	204911,3	192825,4	108,1
Վայոց ձոր	12002,8	12400,9	122,7
Տավուշ	10298.0	10056,4	122,1

[4] arm ef.com/nefs/

Գծապատկեր1

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2013թ. Հունվար-դեկտեմբեր



Վայոց ձորի և Տավուշի մարզերի արդյունաբերական արտադրանքի ծավալները 2013թ-ին հանրապետությունում կազմել են 1%, սակայն 2012թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի ցուցանիշով առաջատարը հենց **Վայոց Ձորի** ու **Տավուշի** մարզերն են՝ համապատասխանաբար 22.7% և 22.1%: Երրորդ տեղում **Արագածոտնի մարզն է՝** 17.1%, ապա **Արարատը**՝ 14.3%, **Սյունիքը**՝ 8.1%, **Երևանը**՝ 6.1%, **Գեղարքունիքը**՝ 5.6%, **Արմավիրը**՝ 4.8%, **Կոտայքը**՝ 4.7%, **Լոռին**՝ 2.9%: **Շիրակի մարզում**, սակայն, արձանագրվել է արդյունաբերական արտադրության 3.4% անկում: Հուսանք, որ այս ցուցանիշը ամեն դեպքում վկայում է, որ ՀՀ-ում տարածքային անհամաչափ զարգացումը աստիճանաբար կհաղթահարվի:

2014թ.-ի հունվար-հունիս ժամանակահատվածում Վայոց ձորի մարզի թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 8220.3մլն դրամ, գրեթե նույնքան, որքան նախորդ տարվա հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում/8.2մլրդ դրամ/: Արդյունաբերական արտադրանքի ծավալով հանրապետությունում դարձյալ առաջատարը Երևանն է, նախավերջին տեղում Վայոց ձորի մարզը, իսկ վերջին տեղում՝ **Տավուշի մարզը՝ 4.6մլն դրամ** /աղյուսակ3/**:**

Աղյուսակ3

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2014թ. հունվար-հունիս

ՀՀ մարզեր և ք. Երևան	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %
Ընդամենը ՀՀ	579335.1	572403.4	100.0
այդ թվում՝			
ք. Երևան	237 329.5	237971,4	100,2
Արագածոտն	11 998.9	10955,8	110,1
Արարատ	58 518.2	63142,1	115,5
Արմավիր	26 262.0	2635,6	98,3
Գեղարքունիք	10 742.6	776	88,5
Լոռի	34 066.5	33444	92,9
Կոտայք	68 276.4	68279,4	93,2
Շիրակ	21 472.7	17703,2	118,9
Սյունիք	97 880.4	95216,2	93,7
Վայոց ձոր	8 220.3	8127,4	153,3
Տավուշ	4 567.6	4452,3	104,2

Գծապատկեր 2

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2014թ. Հունվար-հունիս



Ինչով է պայմանավորված Վայոց ձորի մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի փոքր ծավալը, սակայն աղքատության ցուցանիշի ցածր մակարդակը, և **ինչպիսի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարներ ունի Վայոց ձորի մարզը՝ պայմանավորված իր օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատկություններով:**

Վայոց ձորն աղքատ է անտառներով, սակայն այստեղ աճում են քաղցրահամ մրգեր և խաղողի տարբեր սորտեր, և այս առումով կա բավարար հումքային բազա՝ պահածոների արտադրություն կազմակերպելու համար: 2010թ-ին Վայոց ձորի Սալլիի, Աղավնաձոր, Չիվա, Արփի և Զառիթափ համայնքներուն կառուցվել են 210 տոննա ընդհանուր տարողությամբ մրգերի և բանջարեղենի պահպանման սառնարաններ, իսկ Ելփինի համայնքում մրգերի և բանջարեղենի չորացման արտադրամաս[5]:

Գյուղական բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, այծաբուծությամբ, մեղվապահությամբ, ձկնաբուծությամբ, գինեգործությամբ: Մարզում զարգանում է գյուղատնտեսական հումքի վերամշակումը, և կա բավարար հումքային բազա վերամշակող արդյունաբերություն զարգացնելու համար: Հանրապետության սահմաններից դուրս հայտնի են վայոց ձորի պանրի տեսակները, հատկապես ՝ այծի պանիրը և գինիների տեսակները՝ «Արենի», «Վերնաշեն»: Այժմ մարզում արտադրվում է նաև նռան գինի՝ Արցախից ներկրվող նռան հումքով: Մարզի գյուղվերամշակող ձեռնարկությունների մի մասը համագործակցում է ԱՄՆ-ի միջազգային Զարգացման Գործակալության Մարկետինգի աջակցության ծրագրի հետ և իր բիզնեսը կազմակերպում է միջազգային չափանիշներով:

Ըստ վերջին վիճակագրական տվյալների Վայոց ձորի մարզում արդյունաբերական ոլորտում գործում են 53 արդյունաբերական ընկերություններ: Հենց միայն Եղեգնաձորի համայնքում առկա են հետևյալ արժեշղթաները

- խաղողի աճեցում գինի շշալցում վաճառք
- մրգերի աճեցում օղիներ շշալցում վաճառք
- այծի կաթ պանիր տարայավորում վաճառք

Վայոց ձորի մարզում աճում է բույսերի 1650 տեսակ, որոնց գերակշռող մասը ունի բուժիչ նշանակություն և մեծ պահանջարկ, կարող է օգտագործվել դեղագործական արտադրության մեջ: Այս

[5] www.vdzor.gov.am

առումով կա բավարար հումքային բազա մարզում առկա արժեշղթաների ցանկը համալրելու ևս մեկով՝

➢ դեղաբույսերի հավաքում չորացում փաթեթավորում վաճառք

Մարզում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություններից շատերը մասնակցում են ոչ միայն հանրապետությունում, այլ նաև արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին՝ նվաճելով բարձր մրցանակներ: Դրանցից են «Ձերմուկ Գրուպ»-ը, «Ձերմուկի մայր գործարանը», «Մեգա Արարատ», «Գոլդեն Գոութ», «Գետնատուն», «Արենի» ընկերությունները: Կարծում եմ շուտով լայն ճանաչում կստանա «Գետնատան» նռան գինին: 2011թ-ին մարզում ստացվել է խաղողի գրեթե նույնքան համախառն բերք, որքան 2001-2003թթ.-ին՝ 3 տարում միասին:

Վայոց ձորի մարզը հարուստ է նաև օգտակար հանածոներով՝ ոսկով, արծաթով, կապարով, ցինկով, ուրան, զանազան շինանյութերով՝ կավ, ավազ, ապակու հումք /կվարցային ավազ/, շինարարական քարերով՝ բազալտ, գրանիտ, ֆելզիտ: Վայոց ձորին մեծ ճանաչում է բերել Մարտիրոսի ֆելզիտը՝ տարբեր երանգներով, որով երեսապատված են շատ նշանավոր կառույցներ ոչ միայն Հայաստանում /Մոսկվա, Կիև, Մինսկ, Սոչի, Թբիլիսի, Յալթա/[6]: Մարզում կան նախադրյալներ՝ նաև լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար:

Վայոց ձորի տարածքում կան 150-ից ավելի տաք և սառը աղբյուրներ, որոնցից շատերը ունեն բուժիչ նշանակություն: Դրանցից իր բաղադրությամբ և բուժիչ նշանակությամբ ամենահայտնին «Ձերմուկ» հանքային ջուրն է: Ձերմուկ քաղաքում գործում են մի շարք առողջարաններ, որոնցից մի քանիսը ճանաչված են Հայաստանի սահմաններից դուրս: Կառուցվում են նոր հյուրանոցներ և առողջարաններ: Ձերմուկը հարուստ է բնական ռեսուրսներով, ունի գեղեցիկ ջրվեժ, ըմպելասրահ, ճոպանուղի: Ձերմուկ առողջարանային քաղաքը ունի միջազգային ճանաչում: Կան նպաստավոր պայմաններ՝ էկոտուրիզմի և առողջարանային տուրիզմի զարգացման համար:

Վայոց ձորի մարզը հանդիսանում է պատմա-մշակութային կարևոր հոգևոր կենտրոն: Այդ մասին են վկայում բազմաթիվ պատմական հուշարձանները, եկեղեցիները, խաչքարերը, ամրոցները, կամուրջները: Զարգանում է հոգևոր տուրիզմը, կատարվում են ծիսակարգեր, հոգևոր տոներ, ուխտագնացություն, պատարագ:

---

[6]«Վայոց ձոր»USAID 2004թ.,2009թ.էջ4 «Տիգրան մեծ»

Վայոց ձորի մարզում սկսել է զարգանալ տուրիզմի մի նոր տեսակ՝ ագրոտուրիզմը: Դա զբոսաշրջիկների ժամանակավոր բնակությունն է գյուղական վայրերում: Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար կարևոր հեռանկար է հանդիսանում հատկապես տուրիզմի զարգացումը, հետևաբար և կարևորվում են այդ ուղղությամբ կատարվող ներդրումային գերակայությունները: Տուրիզմի զարգացման համար մեծ դեր կխաղան նաև հյուրատների և հյուրանոցների անհրաժեշտ պայմանների և գրավչության ապահովումը, Երևանից Արցախ և Իրան տանող մայրուղու մի հատվածն անցնում է Արփայի կիրճով և ճանապարհին բացվում են գեղեցիկ տեսարաններ՝ Արենիի եկեղեցին, բազմաթիվ քարանձավներ, Նորավանքի ձորը, «Եդեմ» ռեստորանը: Սակայն Երասխի հատվածում ճանապարհը դառնում է դժվարամատչելի: Կարծում եմ՝ բավականին առաջընթաց կունենա տուրիզմը Վայոց ձորի մարզում՝ Հյուսիս-Հարավ մայրուղու աշխատանքները ավարտելուց հետո, կվերանա Վայոց ձոր տանող ճանապարհի վտանգավորությունը՝ հատկապես ձմռան ամիսներին: Իսկ եթե մայրաքաղաքից մարզ տանող ճանապարհի վտանգավոր հատվածը վերացնելու նպատակով իրականացվի թունելային շինարարություն, ճանապարհը կդառնա ավելի կարճ, անվտանգ և հետաքրքիր՝ զբոսաշրջիկների համար և մարզի համար կապահովի ավելի մեծ ճանաչում ու ավելի շատ եկամուտ:

Ճիշտ է՝ Վայոց ձորի մարզն ունի սոցիալ-տնտեսական զարգացման բավականին մեծ հեռանկարներ, սակայն մարզում դեռևս կան բազմաթիվ խոչնդոտներ, խնդիրներ և մարտահրավերներ:

Անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնախնդիրները, որոնք առաջնահերթ են մարզի համար՝

- Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակ և տարբեր պատճառներով չմշակվող վարելահողերի առկայություն,
- Վերամշակող արտադրամասերի ստեղծում և աշխատատեղերի ավելացում,
- Տուրիզմի զարգացմանն ուղղված պետական և մասնավոր ներդրումների, ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացում,
- Միջհամայնքային համագործակցության ընդլայնման և համայնքների խոշորացման անհրաժեշտություն,
- Տարածքային կառավարման և ՏԻՄ-երի ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման անհրաժեշտություն,

➢ Տարածքային զարգացման անհամաչափության հաղթահարման նպատակով անհրաժեշտ է համայնքների ֆինանսական ինքնուրույնության աճ, համայնքների համագործակցություն և միավորում՝ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր բնագավառների խնդիրների լուծման շուրջ:

➢ Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հարմարավետ պայմաններով ֆինանսական լիզինգ /մեքենաների, սարքավորումներիերի երկարատև վարձակալություն/ հատկապես, այսպես կոչված՝ թաց լիզինգ (wet leasing), երբ լիզինգատուն է կրում գույքի հետ կապված ծախսերը /վերանորոգում, ապահովագրում/:

➢ Տարածքային զարգացման անհամաչափությունները մեղմելու նպատակով սահմանամերձ գյուղերում, օրինակ՝ Խաչիկում, կարելի է իրականացնել ներդրումային ակտիվության խրախուսում՝ խաղողի ընդունման և գինու արտադրություն կազմակերպելու նպատակով, օգտագործելով նաև այնտեղ աճող բարձր որակի խաղողը: Դա կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը և գյուղից բնակչության արտահոսքի նվազեցմանը:

➢ Իրականացնել օժանդակության ծրագրեր՝ ուղղված առավել խոցելի համայնքներին և հաշվի առնելով գյուղական վայրերի տնտեսական զարգացման ներկա առանձնահատկությունները՝ իրականացնել տնտեսական ու ներդրումային ակտիվության խրախուսում:

АННОТАЦИЯ

Анаит Машинян, *преподаватель*

НЕПРОПОРЦИНАЛЬНОСТЬ РЕГИОНАЛЬНОГО СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВАЙОЦДЗОРСКОЙ ОБЛАСТИ

Повышение уровня социально-экономического развития и уравновешение непропорциональностей социального и территориального развития региона, сокращение уровня бедности являются ведущими проблемами нашего государства. Углубление непропорцинальностей территориального социально-экономического развития препятствует внутренней и внешней стабильности государства. В статье представлены изменения в социально-экономическом развитии Вайоцдзорской области в период 2008-2014 гг, первостепенные задачи и вызовы социально-экономического развития.

ANNOTATION

Anahit Mashinyan

DISPROPORTION OF REGIONAL SOCIAL ECONOMIC DEVELOPMENT AND PERPECTIVES OF SOCIAL ECONOMIC DEVELOPMENT OF VAYOTS DZOR

The increase of social economic development in region, social and adjustments of disparities of social and regional development, decrease of the level of poverty are priority issues of our country. The deepening of disproportion of regional social economic development prevents the country’s internal and external social economic stability.

In the article have been represented Vayots Dzor region's changes of social economic development during 2008 – 2014, the region's perspectives of social economic development, the primary problems and challenges.